Հաստատում եմ :
Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի
Հ.1 հիմնական դպրոցի

Տնօրեն՝ /-----/Ա.Գևորգյան

«31» օգոստոսի, 2023-2024ուստարի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Սիսիանի համար 1 հիմնական դպրոց,

ուսումնականհաստատությանանվանումը

1-ին «բ» դասարան

դասարան

Առաքելյան Մերի Ոստանիկ

դասղեկիազգանունը,անունը,հայրանունը

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

1-ին «բ» դասարանում աշակերտների թիվը 15 է, որից 10-ը տղաներ են , 5-ը՝ աղջիկ: Բոլորը սիրով հաճախում են դպրոց, պարտաճանաչ են, աշխատասեր և հետաքրքրասեր: Աշակերտներից մեկն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, որի ուսուցումը կկազմակերպվի ԱՈՒՊ-ի համաձայն:

Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն

Հայեցի դաստիարակության մեջ մեծ դեր ունի հոգևոր դաստիարակությունը: Փոքրիկներին սովորեցնել Տերունական աղոթքը: Սովերեցնել տոնել մերօրյա եկեղեցական տոները,ապահովվել կապը ազգային մշակույթի հետ:

Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ մշակել էթիկայի կանոնները,զրուցել արվեստի մասին,դիտել մուլտֆիլմեր,հաճախել տիկնիկային թատրոն,խամաճիկների
թատրոն։Ունկնդրել տարբեր ժանրերի երաժշտություն։

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Սովորեցնել ռազմահայրենասիրական երգեր, պատմել հայոց բանակի կազմավորման մասին, արիություն և խիզախություն լցնել տղաների
հոգիներում, պատմել հերոս տղաների սխրանքների մասին։ Այցելել քաղաքային պանթեոն։

Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզկուլտուրայի ժամերը օգտագործել նպատակային և բովանդակալից կերպով։Անցկացնել ֆիզկուլը դադարներ, կազմակերպել
խաղեր։Դաստիարակել ֆիզիկապես առողջ,ուժեղ և գեղեցիկ սերունդ։Առողջ մարմնում, առողջ հոգի։

Աշխատանքային դաստիարակություն

Առաջնորդվել«Ժամանակը ոսկի է» կարգախոսով:Աշխատանքով է ձեռք բերվում ամեն ինչ:Բարեկեցություն, հարստություն, հոգևոր արժեքներ:Ինչպես ասել է Չ.Դարվինը.« Այն մարդը,ով անիմաստ վատնում է թեկուզ մեկ ժամ,դեռ չի գիտակցել կյանքի արժեքը»:

Բնապահպանական դաստիարակություն

Սերմանել սեր շրջապատող բնության պահպանման գործում: Աշակերտների գիտակցությանը հասցնել, որ բնությունն է հանդիսանում մարդկության գոյատևման կարևորագույն գորշոնը: Սովորեցնել աղբի տեսակավորումը:

Դպրոց-ընտանիք կապը

Անցկացնել ծնոցական ժողովներ, ծնողներին ծանոթացնել իրենց խնդիրներին, իրավունքներին ու պարտականություններին: Կարևորել երեխայի ճիշտ դաստիարակությունը դպրոցում և տանը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տարվա ընթացքում նախատեսված աշխատանքներ	
Բովանդակություն	**Կատարող**
Անցկացնել 6 տարեկան երեխաների հաշվառում:	ուսուցիչ
Կազմել դաստիարակչական աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման:	ուսուցիչ, ՄԿԱ
Դասղեկի պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները՝ ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն:	ուսուցիչ
Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնելերեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին:	ուսուցիչ
Կիսամյակը 1-2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողովներ:Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական զեկուցումներ, անցկացնել սեմինարներ, քննարկումներ:	ուսուցիչ
Դասարանում ստեղծել ծնողխորհուրդ /բաղկացած 3-5 հոգուց/ ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը, միջոցառումներին:	ուսուցիչ

Ապահովել բոլոր, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ սովորողների համար հանրակրթական ընդհանուր ծրագրերի կատարումը ըստ կրթության աստիճաններին ուսումնական առարկաների:		ուսուցիչ, ուսուցչի օգնականներ	
Միջոցառումների անցկացում		ուսուցիչ, ծնող	
Էքսկուրսիայի կազմակերպում		ուսուցիչ	
Ուս/շ	**Ուս. աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**	**Կատարող**
	1 կիսամյակ		
I	Դասարանական անկյան ստեղծում: Ծանոթացում դասընկերների , ուսուցչի հետ, դպրոցի տնօրինության հետ: Դասգրքերը հյուր են գալիս աշակերտներին: Դասարանում կարգուկանոնի մշակում: Անհատական զրույց ծնողների հետ:		
II	Զրույց՝ «Ես արդեն դպրոցական եմ» թեմայով: Ծանոթացում դպրոցի տարածքին: «Քո առողջությունն ու անձնական հիգիենան» զրույց-քննարկում:		
III	Անվտանգ երթևեկության կանոնների մշակում,ցուցանակի պատրաստում: «Իմ օրվա ռեժիմը» խորագրով զրույց – քննարկում: «Անկախության սերունդն ենք»զրույց		
IV	Նորօրյա հերոսներին նվիրված դասարանական անկյան ստեղծում: Ծնողական ժողովի անցկացում		
V	Դասալսումների կազմակերպում		
VI	Դասասենյակի մաքրության կազմակերպում		
VII	Հետևել դասարանում առողջ մթնոլորտի պահպանմանը: Աշխատանք չառաջադիմող աշակերտների հետ:		
VIII	Սենյակային բույսերի խնամք:		

IX	Վարվեցողության կանոնները հյուր գնալիս: Անհատական աշխատանքներ ուսումնական գործընթացից հետ մնացողների հետ:		
X	Ինչպե՞ս ճիշտ օգտվել համակարգչից: Անվտանգության կանոնները ,տեսադաս:		
XI	Հեքիաթի ընթերցում և քննարկում: «Երեխայի իրավունքներն ու պարտականությունները» թեմայով Զ զրույց:Ստեղծել պաստառ:		
XII	Ծանոթանալ դպրոցի տարհանման պլանին:		
XIII	Տոնական տոնածառի ձևավորում		
XIV	Ամանորյա միջոցառման անցկացում		
	2 Կիսամյակ		
I	Ծնողական ժողովի անցկացում		
II	Անհատական աշխատանք ծնողների հետ: «Հարգանք մեծերի նկատմամբ» թեմայով զրույց:		
III	Դասագրքերի, տետրերի,գրենական պիտույքների ստուգում		
IV	Զրույց ազգային սովորությունների մասին:Տեսադաս: Խոսել գրական հայերեն: Ծանոթանալ Հովհ.Թումանյանի կենսագործունեությանը:		
V	Քաղաքավարությունը՝ մարդու կարևոր բնութագիր: 2 Օգնել միմյանց,լինել լավ ընկեր:Զրույց		
VI	Այցելություն քաղաքային գրադարան		
VII	Այցելություն դպրոցական գրադարան		
VIII	Աշխատանք ուսման մեջ թերացումների շուրջ		
IX	Իմ ձեռագիրը մրցույթի անցկացում		
X	Մուլտֆիլմերի դիտում		
XI	Բանաստեղծությունների ունկնդրում		
XII	«Պահպանենք բնությունը՝ պահպանենք կյանքը» զրույց-քննարկում: Դասագրքերի ստուգում		
XIII	Մաքրություն դասասենյակում		
XIV	Զբոսանք քաղաքում, այցելություն եկեղեցի:		

XV	Տառահանդես միջոցառման նախապատրաստություն		
XVI	Միջոցառոման անցկացում: Ծնողական ժողով Աշակերտների տարեկան առաջադիմության ամփոփում : Ամառային արձակուրդների հանձնարարում:		